

<<Ինտեր Ա.Կ.Վ.Ա.>>ՍՊ ընկերության կողմից Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Սայաթ-Նովա վարչական շրջան Մասիս-Ռանչպար խճուղի 1-ին փակուղի 4 հասցեում գործող ձկնաբուծարանի արտադրական ծավալների ավելացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ(լրամշակված)

Պատվիրատու

<< Ինտեր Ա.Կ.Վ.Ա >> ՍՊԸ

Տնօրեն Կարեն Գրիգորյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն.....3

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)8

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....8

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում12

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ13

2.1 Ֆեռտիլիզացիայի շրջանակներում ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....13

2.2 ԿԼԻՄԱՆ.....14

2.3 Օդային ավազան18

2.4 Ջրային ռեսուրսներ19

2.5 Հողերի նկարագիրը23

Կենդանական աշխարհ.....28

2.8 Թափոնների կառավարում35

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....36

3.1 ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ – ԶԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՒՄ36

3.2 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ37

3.2.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....37

3.2.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ37

3.2.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ37

3.2.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ38

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ39

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....40

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....41

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....41

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ42

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	
1.2	Ձեռնարկող՝	<<Ինտեր Ա.Կ.Վ.Ա.>> ՍՊԸ
1.3	Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Մասիս, Սիփանիկ 20-րդ փողոց 2
1.4	Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Մասիս, Սիփանիկ 20-րդ փողոց 2
1.5	Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Արարատի մարզ, Մասիս խոշորացված համայնքի Մայաթ-Նովա վարչական շրջան

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. «Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին»
12. «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,
13. «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

17. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

18. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

19. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

20. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

21. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,

22. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

23. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

24. ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշում (շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը):

25. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն օրենք:

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

<<Ինտեր Ա.Կ.Վ.Ա.>>ՍՊ ընկերությունը Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Մայաթ-Նովա վարչական շրջան Մասիս-Ռանչպար խճուղի 1-ին փակուղի 4 հասցեում իրականացնում է ձկնաբուծական և խավիարի արտադրության գործունեություն: Ընկերությանը սեփականության իրավուքով պատկանող ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է 58457 քմ: Տարածքում առկա է՝ Ձկնաճեցման լճակներ 3920 քմ, ձկնաճեցման լճակներ 3920 քմ, ջրահեռացման առու 311 քմ, ձկնաճեցման լճակներ 3920 քմ, ձկնաճեցման լճակներ 3920 քմ, պահակատուն 60.9 քմ, պահակատուն 19.5 քմ, ձկնաճեցման լճակ 291.9 քմ, ձկնաճեցման լճակ 3287.65 քմ, ձկնաճեցման լճակ 325.92 քմ, ձկնաճեցման լճակ 10.08 քմ, ձկնաճեցման լճակ 3168.87 քմ, ինկուբացիոն սրահ 235.21 քմ, պարիսպ 85.41 քմ, 187.9 խմ:

Ընկերության տարածքում նոր կառուցապատում չի նախատեսվում:

Ընկերության ջրօգտագործումն իրականացվում է 20.02.2023թ. N0038-23 1-2-Ջ/Կ-Ս-Վ Ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան՝ 8 գործող խորքային հորերից, 82515 խմ/օր կամ 955.0լ/վրկ ծախսով: Լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է դրենաժային համակարգ՝ Հրազդան գետ:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ձկնաբուծարանի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

<<Ինտեր Ա.Կ.Վ.Ա.>> ՍՊ ընկերությունը Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Մայաթ-Նովա վարչական շրջան Մասիս-Ռանչպար խճուղի 1-ին փակուղի 4 հասցեում իրականացնում է ձկնաբուծական գործունեություն: Ընկերությունը նախատեսում է ավելացնել արտադրական ծավալները և գործունեությունը համապատասխանեցնել ջրօգտագործման թույլտվության պայմաններին:

Ընկերությունը գործունեությունը համապատասխանեցնում է 20.02.2023թ. N0038-23 1-2-Ջ/Կ-Ս-Վ ջրօգտագործման թույլտվության պահանջներին և ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս կազմող պայմանների 3 և 4-րդ կետերին :

Տարածքը իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք :

Ընկերությունը զբաղվում է սիբիրյան թառափ տեսակի ձկների աճեցման և սև խավիարի պատրաստման գործունեությամբ : Անհրաժեշտ քանակի ձուկը 276600 հատ 400-500գ զնվում է և աճեցվում մինչև մայրական կազմ : Տարեկան արտադրողականությունը 125 տոննա ձուկ, ինչից ստացվում է 8750կգ սև խավիար: Ջրավազանների համար ջրառն իրականացվում է 8 խորքային հորից: Հեռացվող կեղտաջրերը լցվում են դրենաժ` Հրազդան գետ:

Ընկերության Մայաթ-Նովա վարչական շրջան Մասիս-Ռանչպար խճուղի 1-ին փակուղի 4 հասցեում առկա են հետևյալ շինությունները` ձկնաճեցման լճակներ 3920 քմ, ձկնաճեցման լճակներ 3920 քմ, ջրահեռացման առու 311 քմ, ձկնաճեցման լճակներ 3920 քմ, ձկնաճեցման լճակներ 3920 քմ, պահակատուն 60.9 քմ, պահակատուն 19.5 քմ, ձկնաճեցման լճակ 291.9 քմ, ձկնաճեցման լճակ 3287.65 քմ, ձկնաճեցման լճակ 325.92 քմ, ձկնաճեցման լճակ 10.08 քմ, ձկնաճեցման լճակ 3168.87 քմ, ինկուբացիոն սրահ 235.21 քմ, պարիսպ 85.41 քմ, 187.9 խմ:

Մանրաձկից մինչև ապրանքային ձկան աճեցման ցիկլը տևում է մոտ 1 տարի: Իշխան ձկան հաշվարկով մեկ ձկան համար մինչև 1կգ աճեցնելու համար կպահանջվի 1.8 կգ կեր, իսկ ստերիլտի հաշվարկով` 3.2 կգ: Ընկերության տարեկան արտադրողականությունը կհասնի 955 տ:

Լճակների վրա տեղադրված են աէռատորներ ջուրը անհրաժեշտ թթվածնով հագեցնելու համար:

Ավագաններ ջրամատակարարումը իրականացվում է ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան` 8 խորքային հորերից, 82515 խմ/օր / կամ 955.0լ/վրկ ծախսով: Օգտագործվող ջրաքանակի ավելացում չի սպասվում,

ավազաններում շրջանառվելուց հետո համաձայն ջրօգտագործման թույլտվության հեռացվում է դրենաժ` Հրագղան գետ:

Ձկնաբուծական լճակներում ապահովված է և բնական և արհեստական լուսավորություն:

Ձկնաճեցման լճակներում ձկնատեսակներին բնորոշ կենսամիջավայրը ապահովելու նպատակով ջրի շրջանառելու հաճախականությունը 4.5 ժամ է, ջրածնային ցուցիչը PH – 6.5-8.5, ջրում թթվածնի պահանջարկը ապահովում է աեռատորների միջոցով, ձկներին կերակրելու ռեժիմը օրեկան 3 անգամ: Ձկնաբուծական լճակներից արտահոսքը առանց մաքրման լցվում է դրենաժ (ամրագրված է ջրօգտագործման թույլտվությամբ):

Ընկերության տարածքում աշխատողների համար նախատեսված է հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ:

Ընկերությունը իր գործունեությունն իրականացնում է օրենքով սահմանված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին համաձայն և կրկնակի ուշադրություն է դարձնում ձկնաբուծարանից - 250մ և ավել հեռավորության վրա գտնվող բնակելի գոտու հանգամանքին:



Խորքային հորերի կոորդինատները՝

$$X = 44^{\circ} 24' 36.9'' \quad Y = 40^{\circ} 03' 20.9''$$

$$X = 44^{\circ} 24' 40.9'' \quad Y = 40^{\circ} 03' 19.9''$$

$$X = 44^{\circ} 24' 42.4'' \quad Y = 40^{\circ} 03' 22.4''$$

$$X = 44^{\circ} 24' 42.8'' \quad Y = 40^{\circ} 03' 25.5''$$

$$X = 44^{\circ} 24' 43.3'' \quad Y = 40^{\circ} 03' 31.1''$$

$$X = 44^{\circ} 24' 38.99'' \quad Y = 40^{\circ} 03' 31.9''$$

$$X = 44^{\circ} 24' 34.6'' \quad Y = 40^{\circ} 03' 30.8''$$

$$X = 44^{\circ} 24' 36.2'' \quad Y = 40^{\circ} 03' 24.2''$$

Ջրահեռացում՝ $X = 44^{\circ} 24' 36.2'' \quad Y = 40^{\circ} 03' 25.74''$

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Աշխատողների սանիտարա-կենցաղային կարիքների համար անհրաժեշտ թարմ ջրի ծախսի տարեկան ծավալը կկազմի

- a) կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝
- b) $W_{\text{բ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ
- c) n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ
- d) N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ
- e) n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 4 մարդ
- f) N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ
- g) T – աշխատանքային օրերի թիվն է՝ 365 օր
- h) $W_{\text{բ.տ.}} = (1 \times 0.016 + 4 \times 0.025) \times 450 = 42.3$ խմ/շին. ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 42.3 խմ/շին.ժամ:

Ընկերությունում խմելու ջուրը մատակարարվում է պայմանագրային հիմունքներով, իսկ տնտեսակենցաղային ջրերը հեռացվում է դրենաժ՝ Հրագդան գետ:

Ընկերությունը ունի ՇՄ նախարարության կողմից համաձայնեցված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաներ:

Ընկերությունը հանդիսանում է <<ՀԷՑ>> բաժանորդ էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն պայմանագրի (Պայմանագիրը կցվում է):

Տարածքում գազաֆիկացում չի նախատեսվում, ջեռուցման համար կօգտագործվեն էլեկտրական սարքեր:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մայաթ-Նովա վարչական շրջանը գտնվում է Արարատի մարզի Մասիսի խոշորացված համայնքի տարածքում: Հեռավորությունը մարզկենտրոն Արտաշատից կազմում է 17կմ: Գյուղը տեղադրված է Արարատյան դաշտում, Հրազդան գետի ձախափնյա հովտում: Ծովի մակարդակից ունի 828 մ բարձրություն:

Երկրաբանական Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Արարատի մարզի բնության հուշարձանների ցանկ

11	«Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
12	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
13	«Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ»	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
14	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
15	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
16	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
17	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
18	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
19	«Ջերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի
20	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ

2.2 ԿԼԻՄԱՆ

Սայաթ-Նովա համայնքը գտնվում է Արարատյան դաշտավայրում:

Ուսումնասիրվող տարածքը մտնում է տաք կլիմայական գոտու մեջ և ունի շոգ ամառով և ցուրտ անհողմային ձմեռով խիստ մայրցամաքային կլիմա: Օդի բացարձկ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +42°C, իսկ նավագագույնը՝ -30°C: Գերակշռում են միջին արագությունների 7,2մ/վրկ արագության քամիները (մ/կ Զվարթնոց): Քամու ճնշումը հասնում է մինչև 45 կգուծ/մ²: Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 316մմ: Ջրան ծածկույթի հաստությունը հասնում է 58սմ, ճնշումը՝ 70 կգուծ/մ²: Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 60սմ (մ/կ Երևան-Էրեբունի):

Ստորև բերված են օդերևութաբանական դիտարկումներով պայմանավորված որոշ կլիմայական տվյալներ

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակար դակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավել լազույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արարատ	818	-3.3	-0.3	6.5	13.3	18.0	22.4	26.2	25.8	20.9	13.7	6.2	-0.2	12.4	-32	42

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	ըստ ամիսների													ամենա ցուրտ ամսվա, %	ամենա շոգ ամսվա, %
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Արարատ	78	71	61	56	55	49	45	45	49	61	72	79	60	66	29

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական _____, մմ													Ձնածածկույթ		
	օրական առավելագույն													Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	ըստ ամիսների															
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արարատ	16	18	25	35	35	23	10	6	8	18	21	16	231	35	28	61
	22	34	26	31	33	37	20	31	28	32	32	28	37			

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հմմ)	Սահմաններ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Սննդամթերքի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան Ուժեղ քամիներով (15մ/վ օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում			
			Միջին արագությունը, մ/վ											20	50	100	
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս - Արև ավելյան (ՀսԱրլ)	Արև ավելյան (Արլ)	Հարավ - Արև ավելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ- Արև մտյան (ՀվԱրմ)	Արև մտյան (Արմ)	Հյուսիս- Արև մտյան (ՀսԱրմ)				20	50	100	
Արարատ	921,6	հունվար	16	3	8	18	10	5	11	29	50	1,3	1,9	18	25	27	29
			1,9	1,6	1,7	2,7	2,1	1,5	1,9	2,2							
		ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2,3					
			2,7	2,3	2,7	3,4	2,8	2,7	2,4	2,8							
		հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2,3					
			2,6	2,7	2,2	2,7	2,2	2,1	2,6	3,0							
		հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26	39	1,5					
			2,3	1,8	1,7	2,3	2,0	1,9	2,1	2,5							

2.3 Օդային ավազան

Սայաթ-Նովա համայնքի մթնոլորտային օդի վրա ազդեցություն կարող են ունենալ հիմնականում ավտոմայրուղու տրանսպորտային միջոցների արտանետումները:

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Սայաթ-Նովա համայնքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ հրապարակված տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նախագիծը¹: Ըստ այդ նախագծի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Սայաթ-Նովա վարչական շրջանը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են²

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

2.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է <<Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից:

Սայաթ-Նովա համայնքը գտնվում է Հրազդան գետի ջրահավաք ավազանում:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

2022 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 35%-ում՝ 3-րդ դաս, 5%-ում՝ 4-րդ դաս և 55%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Քասախ գետի գետաբերանի դիտակետի, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը:

Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որից 13-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2021 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 1183.3 մլն մ³, որից 38%-ը բաժին է ընկնում մակերևութային, 62%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբուծության (47%), ոռոգման (39%), արտադրական (9%) և խմելու (5%) նպատակներով:

Մակերևութային ջրերի որակ Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև, Աշտարակ քաղաքից վերև և ներքև, ինչպես նաև գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ապարան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով, Աշտարակ քաղաքից վերև՝ ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով, Աշտարակ քաղաքից ներքև՝ նաև ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ նիտրատ և ֆոսֆատ իոններով, վանադիումով, երկաթով և Ըստ ընդհանուր անօրգանական ազոտով: Ապարան քաղաքից ներքև ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և երկաթով:


Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև գնահատվել է «միջակ» (3 -րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Գեղանիստ գյուղի մոտ, և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Քաղսի գյուղից ներքև և գետաբերանում՝ պայմանավորված ամոնիում իոնով և վանադիումով, Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ թթվածնի 5-օրյա կենսաբանական պահանջարկով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:


Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:


Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորնգի կենտրոն» ՊՈԱԿ 2022թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների:




Գծապատկեր 83. Քասախ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2021-2022 թթ.




Գծապատկեր 84. Քասախ գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2021-2022թթ.




Գծապատկեր 85. Հրազդան գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022թթ.




Գծապատկեր 86. Հրազդան գետի ջրում նիտրիտ իոնի կոնցենտրացիան 2021-2022թթ.



Գծապատկեր 87. Հրազդան գետի ջրում ֆուֆատ իոնի կոնցենտրացիան 2021-2022թթ.



Գծապատկեր 88. Գետառ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2021-2022թթ.



Գծապատկեր 89. Գետառ գետի ջրում ֆուֆատ իոնի կոնցենտրացիան 2021-2022թթ.

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգ իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, որոնցից 13 դիտակետում իրականացվել է նաև ջրի որակի մոնիթորինգ:

Գյ. Սուլակի N1297, N1832 և գյ. Բջնիի N246 դիտակետերում 2022թ. ծախսի բարձր արժեքները նկատվել են մայիս-հունիս, իսկ ցածրը՝ հունվար, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին և տատանվում են 1.75-7.65 լ/վ սահմաններում:

Ապարան քաղաքի N2051 բնաղբյուրում ծախսերը 2022 թ. տատանվել են 4.23-6.77 լ/վ սահմաններում:

Ջրերի ծախսի և մակարդակի փոփոխությունները զգալի են Հրազդանի ՋԿՏ-ի Արարատյան գոգավորության տարածքում գտնվող N78, N1523, N1519, N1526 դիտակետերում:

Հրազդանի ՋԿՏ-ի 13 դիտակետում 2022 թվականի մայիս և նոյեմբեր ամիսներին իրականացվել է ջրի որակի մոնիթորինգ: Այս ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացման տատանումները կազմել են 0.1-1.3 գ/լ, սուլֆատ իոնի կոնցենտրացիաների տատանումները՝ 5.8-517.2 մգ/լ: Հանքայնացման գերազանցումներ դիտվել են ք. Մասիսի N1519, գյ. Ջրահովիտի N2007 և գյ. Հովտաշենի N2053 հորատանցքերում, սուլֆատ իոնի կոնցենտրացիաները գերազանցումներ դիտվել են գյ. Ջրահովիտի N2007 հորատանցքում: Քլորիդ իոնի կոնցենտրացիաների տատանումները կազմել են 2.4-196.4 մգ/լ, նիտրատ իոնի տատանումները՝ 2.7-44.1 մգ/լ, պղնձի, կապարի և արսենի կոնցենտրացիաների տատանումները համապատասխանաբար՝ 0.0005-0.005 մգ/լ, 0.0001-0.009 մգ/լ և 0.0003-0.046 մգ/լ և չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.7 Կենսաբազմազանություն

Մայաթ-Նովա համայնքի տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Կենսաբանական ռեսուրսներ: Կիսաանապատային գոտու կենսառեսուրսները աչքի չեն ընկնում իրենց բազմազանությամբ, սակայն կերհանդակները ներկայացված են օշինդրային, օշինդրա-էֆեմերային, օշինդրա-հացազգային, օշինդրա-օշանային և օշանայինբուսական համակեցություններով: Ուտելի և համեմունքային բույսերից կարելի է նշել բոխին, շրեշը, շուշանը, դանձիլը: Եթերայուղատու բույսերից են ուրցը, անթառամը, օշինդրը: Բնական խեժով հարուստ են հատկապես տրագականտային գազերը: Որսի օբյեկտ են համարվում լորը, քարիկաքավը, մի շարք ջրլողթռչուններ /սևփարփար, մեծուզակ, փոքրսուզակ, կոնչան բադ, մոխրագույն բադ և այլն:

Մարզի բուսականության առավել տարածված տեսակներից են կիսաանապատային, տափաստանային տեսակները, որոնք զբաղեցնում են տարածքի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերը:

Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

Բուսական աշխարհ: Նախատեսվող Անապատային չորասեր բուսականության բնորոշ բուսատեսակներից են շորան, բալախը, սարսազան որոնք դիմանում են աղակալմանը: Քաղաքի հարավային մասում գերակշռում է հալոֆիտային, հալոքսեռոֆիտանապատային բուսականությունը - *Salsola eticoides*, *S. dendroides*, *S. nitraria*, *Haiocnemumstrobilaceum*: Արևելքում օշինդրա-էֆեմերային կիսաանապատային բուսականության գերակշռությամբ - *Artemisia fragrans*, *Kochiaprostrata*, *Capparis herbacea*, *Ceratoides papposa*, *Atraphaxi sspinosa*, *Rhamnus paiiasii*, *Tanacetum argyrophyllum*, *Poa bulbosa*, տեսակներ - *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*: Կիսաանապատային գոտու համար բնորոշ բուսատեսակներից են՝ օշինդր բուրավետը, օշան գորշ, օշան հավամրզանման, գեղածնկիկ մատիտեղանման, լերդախոտ ալեհեր, ավելաբույսգետնատարած: Հազվագյուտ և անհետացող գիպսոֆիտ անապատային բուսական ֆորմացիաներ՝ *Cephalorrhynchustakhtadzhianii*, *Zygophyllumatriplicoides*:

Մարզի տարածաշրջանին բնորոշ են՝ կտավատազգիները (Linaceae), մեխակազգիները (Caryophyllaceae):

Ճլորիցտիկ շրջանում հանդիպում են նաև. «Salsola ericoides», «Kochia prostrata», «Atraphaxi spinosa», «Rhamnus pallasii», Euphorbiaceae ընտանիքի էնդեմիկ տեսակը՝ «Euphorbia vedica»՝ իշակաթնուկ վեղիի:

Մարզի տարածքում հանդիպող և անհետացող բուսական տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր գրքից:

Էնդեմիկ տեսակն է՝ իշակաթնուկ ազգիներ (Euphorbiaceae):

Աղյուսակում բերված է նաև յուրաքանչյուր բույսի տեսակի պահպանության կարգավիճակները, ըստ Կարմիր գրքում կատարված կատեգորիաների դասակարգման (կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR), վտանգված տեսակ (EN), խոցելի տեսակ (VU)): Հաշվի առնելով այն, որ սնկերի պահպանությունը զգալիորեն տարբերվում է բույսերի պահպանությունից, Կարմիր գրքում ընտրվելիք 40 տեսակի սնկերի նկարագրերը ներկայացվել են մակրոսկոպիկ սնկերի համար միջազգայնորեն ընդունված 6 կատեգորիայով՝ անհետացած /EX/, անհետացման եզրին գտնվող /NT/, կրիտիկական վիճակում գտնվող /CR/, վտանգված /EN/, խոցելի /VU/, տվյալներն անբավարար են վիճակը գնահատելու համար /DD/:

Աղյուսակ 3.4. Պահպանության կարիք ունեցող ֆլորայի տեսակները

Հ/հ	Բույսերի անվանումը		Պահպանության կարգավիճակները ըստ Կարմիր գրքի
	Հայերեն	Լատիներեն	
Ծածկասերմեր –Angiospermae			
Խնկեղեգազգիներ – Acoraceae			
1	Խնկեղեգ ճահճային	Acorus calamus L.	EN
Հովվափողազգիներ – Alismataceae			
2	Նետախոտ նետախոտանման	Sagittaria sagittifolia L.	CR
Հովանոցավորներ – Apiaceae			
3	Օշակ մերկ	Dorema glabrum Fisch. & C.A.Mey.	CR
4	Գինեծաղիկ գազարատերև	Oenanthe silaifolia M. Bieb.	CR
Բարդաձաղկավորներ - Asteraceae			
5	Վարդատերեփուկ մուշկային	Amberboa moschata (L.) DC.	EN

6	Տերեփուկ երևանյան	<i>Centaurea erivanensis</i> (Lipsky) Bordz.	VU
7	Տերեփուկ արմատազամբյուղային	<i>Centaurea rhizocalathium</i> (K.Koch) Tchich.	EN
8	Շարդինիա խոշորապտուղ	<i>Chardinia macrocarpa</i> K.Koch	VU
9	Կանգար վարդագույն	<i>Gundelia rosea</i> M.Hossain & R.A.Al-Taey.	EN
10	Կղմուխ Օշեի	<i>Inula aucheriana</i> DC. (= <i>I. seidlitzii</i> Boiss.)	EN
11	Կաթնուկ Թախտաջյանի	<i>Lactuca takhtadzhianii</i> Sosn.	EN
12	Խինձ գորովանի	<i>Scorzonera gorovanica</i> Nazarova	EN
Գաղտրիկազգիներ -Boraginaceae			
13	Ռոխելիա սրտաձևաբաժակ	<i>Rochelia cardiosepala</i> Bunge	EN
Խաչածաղկավորներ – Brassicaceae			
14	Երուկաստրում Թախտաջյանի	<i>Erucastrum takhtajanii</i> V. I. Dorof.	EN
15	Երեքօրնիկ պարսկական	<i>Hesperis persica</i> Boiss.	EN
16	Նվարդակ քնարածև	<i>Lepidium lyratum</i> L.	EN
17	Կեղծանկաթաթիկ դիխոտոմիկ	<i>Pseudoanastatica dichotoma</i> (Boiss.) Grossh.	EN
Թելուկազգիներ– Chenopodiaceae			
18	Ճակնդեղ բաժանապտուղ	<i>Beta lomatogona</i> Fisch. et C. A. Mey.	CR
19	Բիններգիա շուրջաթև	<i>Bienertia cycloptera</i> Bunge	CR
20	Աղածաղիկ կուլպական	<i>Halanthium kulpianum</i> (K. Koch) Bunge.	EN
21	Միկրոկնեմում մարգանսանման	<i>Microcnemum coralloides</i> (Loscos et Pardo) Font-Quer	EN
22	Օշան Օշեի	<i>Salsola aucheri</i> (Moq.) Bunge ex Iljin	EN
23	Օշան թաղիքային	<i>Salsola tomentosa</i> (Moq.) Spach	EN
Շնդեղազգիներ – Colchicaceae			
24	Խլոպուզ ընձյուղավոր	<i>Merendera sobolifera</i> Fisch. & C.A.Mey.	CR
Իշակաթնուկազգիներ – Euphorbiaceae			
25	Իշակաթնուկ հալեպական	<i>Euphorbia aleppica</i> L.	CR
Լոբազգիներ – Fabaceae			
26	Գազ կորաեղջյուրավոր	<i>Astragalus camptoceras</i> Bunge (= <i>A. bungei</i> Winkl. et Fedtsch.)	EN
27	Գազ թավոտ	<i>Astragalus eriopodus</i> Boiss. (= <i>A.</i>	EN

		mandenovae Akhv. et Mirz., ined)	
28	Գազ բժավոր	<i>Astragalus guttatus</i> Banks et Sol. (=A. striatellus Pall. ex M. Bieb.)	EN
29	Գազ կարյազինի	<i>Astragalus karjagini</i> Boriss.	EN
30	Գազ տարօրինակ	<i>Astragalus paradoxus</i> Bunge	EN
31	Գազ Սուկաչովի	<i>Astragalus sukaczewii</i> Derv. et Jelenevsky	VU
32	Գազ վեդու	<i>Astragalus vedicus</i> Takht. (= <i>Astragalus karabaghensis</i> Bunge subsp. <i>vedicus</i> (Takht.) Takht.)	EN
33	Կուրկուրան կարճաթև	<i>Hedysarum micropterum</i> Bunge	VU
34	Կորնգան հայաստանի	<i>Onobrychis hajastana</i> Grossh.	EN
Հիրիկազգիներ – Iridaceae			
35	Հիրիկ նրբագեղ	<i>Iris elegantissima</i> Sosn.	EN
36	Հիրիկ մուսուլմանական	<i>Iris musulmanica</i> Fomin	EN
Կնյունազգիներ – Juncaceae			
37	Կնյուն սուր	<i>Juncus acutus</i> L.	EN
Փիփերթազգիներ – Malvaceae			
38	<i>Malvella sherardiana</i> (L.) Jaub. Մոլոշիկ Ժերարի	<i>Lomatogonium carinthiacum</i> (Wulf.) A.Br.	EN
Ջրահարսազգիներ – Najadaceae			
39	Ջրահարս փոքր	<i>Najas minor</i> L.	VU
Հացազգիներ – Poaceae			
40	Արմատագլխիկ արևելյան	<i>Rhizocephalus orientalis</i> Boiss.	VU
Տորոնազգիներ – Rubiaceae			
41	ԺոբերգիաՍովիչի	<i>Jaubertia szovitsii</i> (DC.) Takht. (= <i>Neogaillonia szovitsii</i> (DC.) Lincz)	VU
42	Լեպտունիս մազանման	<i>Leptunis trichodes</i> (J.Gay) Schischk.	EN
Խլածաղկազգիներ – Scrophulariaceae			
43	Խոնդատ մերկացողուն	<i>Verbascum nudicaule</i> (Wyd.) Takht.	EN

Ամփջապես ձկնաբուծարանի կառուցման համար հատկացված տարածքում էնդեմիկ, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չկան:

Կենդանական աշխարհ

Տարածքը հարուստ է կիսաանապատային գոտուն բնորոշ սողուններով, ինչպիսին են միջերկրածովային կրիան /*Testudo graeca*/, բարեկազմ օձ ազուլի մողեսը /*Ophisopselegans*/, Շտրաուլի /*Eremias trauchi*/ և Անդրկովկասյան /*E. pleskei*/ մողեսիկները, Անդրկովկասիան թափրային կլորագլուխը /*Phrynocephalus helioscopus persicus*/, մողեսաօձը /*Malpolon monspessulanus*/, վզնցավոր /*Eirenis collaris* / և հայկական /*E. punctatolineatus* / էյրենիսները, կարմրափոր սահնօձ կամշահմարը / *Coluberschmidti*/ և կապարագույն սահնօձը /*C. nummifer*/, Անդրկովկասյան գյուրգան /*Viperalebetina*/: Կրծողներից – սովորական /*Microtus arvalis*/ և հասարակական /*M. socialis*/ դաշտամկները, հարավային /*Meriones meridianus*/, փոքրասիական /*M. blackleri*/ և Վինոգրադովի / *M. vinogradovi* / ավազամկները: Կատվազգիներից - եղեգնակատուն /*Felis chaus*/: Ջրաճահճային էկոհամակարգերում հանդիպում են Կասպիական կրիան/*Mauremiscaspica*/ և լճագորտը/*Ranaridibunda*/:

Նշված համայնքային տարածքներում հանդիպում են ամենուր ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակ դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճոխկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Կենդանիների էնդեմիկ տեսակներն են՝ հայկական մկնիկ, կովկասյան տարավուն:

Աղյուսակում բերված են մերձավոր տարածքներում պահպանության կարիք ունեցող կենդանիների տեսակները:

Աղյուսակում բերված է նաև յուրաքանչյուր տեսակի պահպանության կարգավիճակները, ըստ Կարմիր գրքում կատարված կատեգորիաների դասակարգման (անհետացած տեսակ (EX), տարածաշրջանում անհետացած տեսակ (RE), կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR), վտանգված տեսակ (EN), խոցելի տեսակ (VU), սովյալների անբավարարություն (DD)):

Աղյուսակ 3.5. Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

Հ/հ	Կենդանիների անվանումը		Պահպանության կարգավիճակները ըստ Կարմիր գրքի
	Հայերեն	Լատիներեն	
Միջատներ – Insecta			
1	Մեծաչք ճպուռ Կարգ Ճպուռներ Ընտանիք Նետիկներ	Lestes macrostigma (Eversmann, 1836) - Odonata - Coenagrionidae	VU
2	Միմպեկմա ճպուռ Կարգ Ճպուռներ Ընտանիք Նետիկներ	Sympecma paedisca (Brauer, 1877) - Odonata - Coenagrionidae	VU
3	Վան Բրինկի նետիկ Կարգ Ճպուռներ Ընտանիք Նետիկներ	Coenagrion vanbrinkae Lohmann, 1993 - Odonata - Coenagrionidae	VU
4	Ուբադիժճպուռ Կարգ՝ Ճպուռներ Ընտանիք՝ Գոմֆիդներ	Gomphus ubadschii Schmidt, 1953 - Odonata – Gomphidae	VU
5	Սևծովյան ճպուռ Կարգ՝ Ճպուռներ Ընտանիք՝ Իսկական ճպուռներ	Libellula pontica Selys, 1887- Odonata - Libellulidae	EN
6	Սատունինի սկոտոդրիմադուգա. Կարգ՝ Ուղղաթևեր Ընտանիք՝ Ծղրիդներ	Scotodrymadusa satunini (Uvarov, 1916)- Orthoptera – Tettigoniidae	CR
7	Արարատյան որդան կարմիր Կարգ՝ Հավասարաթևեր Ընտանիք՝ Հսկա որդաններ	Porphyrophora hammelii Brandt – Homoptera- Margarodidae	CR
8	Ռուբենյանիբնդեռիկ Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ Ընտանիք՝ Թերթիկաբեղավորներ	Adoretus rubenyani Kalashian, 2002 - Coleoptera - Scarabaeidae	EN
9	Կեղծ խոտային չրխկան Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ Ընտանիք՝ Չրխկաններ	Cardiophorus pseudogramineus Mardjanian, 1977 - Coleoptera – Elateridae	EN
10	Նմանաձև ծաղկեփռեղեղեր Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ	Cteniopus persimilis Reitter, 1890 – Coleoptera- Alleculidae	EN

	Ընտանիք՝ Ծաղկեփռուկներ		
11	Բոգաչևի սևամարմին Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ Ընտանիք՝ Սևամարմիններ	Ectromopsis bogatchevi (Khnzoryan, 1957) – Coleoptera – Tenebrionidae	CR
12	Նեղ սևամարմին Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ Ընտանիք՝ Սևամարմիններ	Laena constricta Khnzorian, 1957 - Coleoptera - Tenebrionidae	EN
13	Ավրորինա դեղնաթիթեռ Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ Ընտանիք՝ Ճերմակաթիթեռներ	Colias aurorina Herrich- Schaffer, [1850] - Lepidoptera - Pieridae	VU
14	Մոմաբույսիմեղու Կարգ՝ Թաղանթաթևեր Ընտանիք՝ Մեզախիլիդներ	Osmia cerinthides F. Morawitz, 1876 - Hymenoptera - Megachilidae	VU
15	Երկարալեզու մեղու Կարգ՝ Թաղանթաթևեր Ընտանիք՝ Անթոֆորիդներ	Tetralonia macroglossa Illiger, 1806 - Hymenoptera – Anthophoridae	EN
16	Հսկա գիշաճանձ Կարգ՝ Երկթևեր Ընտանիք՝ Գիշաճանձեր	Satanas gigas Eversmann, 1885 - Diptera – Asilidae	VU
ՍՈՂՈՒՆՆԵՐ- REPTILIA			
17	Երկարատ սցինկ, Կարգ ՄՈՂԵՄՆԵՐ Ընտանիք Սցինկեր	Eumeces schneideri (Daudin, 1802) , SAURIA, Scincidae	VU
18	Անդրկովկասյան մողեսիկ, Ընտանիք Իսկական մողեսներ	Eremias pleskei Bedriaga, 1907, Lacertidae	CR
19	Սատունինի սևագլուխ ռինիտկալամուս, Կարգ ՕՁԵՐ, Ընտանիք Լորտուներ	Rhynchocalamus melanocephalus satunini (Nikolsky,1899),SERPENTES, Colubridae	VU
20	Կովկասյան կատված, Կարգ ՕՁԵՐ, Ընտանիք Լորտուներ	Telescopus fallax (Fleschmann, 1831),SERPENTES, Colubridae	VU

ԹՈՉՈՒՆՆԵՐ - AVES			
21	Վարդագույն հավալուսն, Կարգ՝ ԹԻԱՎՈՏԱՅԻՆՆԵՐ Ընտանիք՝ Հավալուսններ	Pelecanus onocrotalus Linnaeus,1758, PELECANIFORMES, Pelecanidae	VU
22	Մեծ ձկնկուլ, Կարգ՝ ԹԻԱՎՈՏԱՅԻՆՆԵՐ Ընտանիք՝ Ձկնկուլներ	Phalacrocorax carbo Linnaeus, 1758, PELECANIFORMES, Phalacrocoracidae	VU
23	Փոքր ձկնկուլ, Կարգ՝ ԹԻԱՎՈՏԱՅԻՆՆԵՐ Ընտանիք՝ Ձկնկուլներ	Phalacrocorax pygmaeus Pallas, 1773, PELECANIFORMES, Phalacrocoracidae	VU
24	Ճչան կարապ, Կարգ՝ ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բադեր	Cygnus cygnus (Linnaeus, 1758) , ANSERIFORMES, Anatidae	VU
25	Մոխրագույն սագ, Կարգ՝ ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բադեր	Anser anser (Linnaeus, 1758) , ANSERIFORMES, Anatidae	VU
26	Կարմրախածի սագ, Կարգ՝ ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բադեր	Branta ruficollis (Pallas, 1769) , ANSERIFORMES, Anatidae	EN
27	Կարմիր բադ, Կարգ՝ ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բադեր	Tadorna ferruginea (Pallas, 1764) , ANSERIFORMES, Anatidae	VU
28	Լայնակտուց բադ, Կարգ՝ ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բադեր	Anas clypeata Linneus, 1758, ANSERIFORMES, Anatidae	VU
29	Մարմարյա մրտիմն, Կարգ՝ ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բադեր	Marmaronetta angustirostris Menetries, 1832, ANSERIFORMES, Anatidae	EN
30	Սպիտակաաչք սուգաբադ, Կարգ՝ ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բադեր	Aythya nyroca (Gueldenstadt, 1770) , ANSERIFORMES, Anatidae	VU
31	Սպիտակաճակատ սագ, Կարգ՝ ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բադեր	Anser albifrons (Scopoli, 1769) , ANSERIFORMES, Anatidae	VU
32	Գառնանզղ (Մորուքավոր անզղ),	Gypaetus barbatus Linnaeus,	VU

	Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	1758, FALCONIFORMES, Accipitridae	
33	Գիշանգղ, Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	Neophron percnopterus Linnaeus, 1758, FALCONIFORMES, Accipitridae	EN
34	Սպիտակագլուխ անգղ, Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	Gyps fulvus (Hablizl, 1783) , FALCONIFORMES, Accipitridae	VU
35	Սև անգղ, Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	Aegipus monachus (Linnaeus, 1766), FALCONIFORMES, Accipitridae	EN
36	Օձակեր արծիվ, Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	Circaetus gallicus (J. F. Gmelin, 1788) , FALCONIFORMES, Accipitridae	VU
37	Տափաստանային մկնաճուռակ, Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	Circus macrourus (S. G. Gmelin, 1771), FALCONIFORMES, Accipitridae	EN
38	Եվրոպական ճնճղաճուռակ, Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	Accipiter brevipes (Severtzov, 1850), FALCONIFORMES, Accipitridae	VU
39	Տափաստանային արծիվ, Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	Aquila nipalensis orientalis Hodgson, 1833, FALCONIFORMES, Accipitridae	VU
40	Բլրային արծիվ, Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	Aquila heliaca Savigny, 1809, FALCONIFORMES, Accipitridae	VU
41	Քարարծիվ, Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ճուռակներ	Aquila chrysaetos (Linnaeus, 1758), FALCONIFORMES, Accipitridae	VU
42	Աղավնաբազե, Ենթատեսակ Falco columbarius aesalon (Tunstall, 1771) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բազեններ	Falco columbarius Linnaeus, 1758, Falco columbarius aesalon (Tunstall, 1771), FALCONIFORMES, Falconidae	DD

43	Սուլթանական հավ, Ենթատեսակ՝ <i>Porphyrio porphyrio caspius</i> (Hartert, 1917) Կարգ՝ ԿՌՈՒՆԿԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ջրահովվիկներ	<i>Porphyrio porphyrio</i> (Linnaeus, 1758), <i>Porphyrio porphyrio caspius</i> (Hartert, 1917), GRUIFORMES, Rallidae	DD
44	Կոցար-կաչաղակ, Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Կոցար-կաչաղակներ	<i>Haematopus ostralegus</i> Linnaeus, 1758, CHARADRIIFORMES, Haematopodidae	VU
45	Ճախրուկ, Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Քարադրներ	<i>Chettusia gregaria</i> Pallas, 1771, CHARADRIIFORMES, Charadriidae	EN
46	Մեծ արորիկ, Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Սորակոցարներ	<i>Numenius arquata</i> (Linnaeus, 1758) , CHARADRIIFORMES, Scolopacidae	VU
47	Կրկնակոցար, Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Սորակոցարներ	<i>Gallinago media</i> (Latham, 1787), CHARADRIIFORMES, Scolopacidae	VU
48	Ոտնացուպիկ, Ենթատեսակ՝ <i>Himantopus himantopus himantopus</i> (Linnaeus, 1758) Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բզակտուցներ	<i>Himantopus himantopus</i> (Linnaeus, 1758), <i>Himantopus himantopus himantopus</i> (Linnaeus, 1758) , CHARADRIIFORMES, Recurvirostridae	VU
49	Բզակտուց Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բզակտուցներ	<i>Recurvirostra avosetta</i> Linnaeus, 1758, CHARADRIIFORMES, Recurvirostridae	VU
50	Մարգագետնային ծիծառակոցար Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ծիծառակոցարներ	<i>Glareola pratincola</i> (Linnaeus, 1766), CHARADRIIFORMES, Glareolidae	VU
51	Բվեճ, Ենթատեսակ՝ <i>Bubo bubo interpositus</i> (Rothschild and Hartert, 1910) Կարգ՝ ԲՎԱՆՄԱՆՆԵՐ, Ընտանիք՝ Բվեր	<i>Bubo bubo</i> (Linnaeus, 1758), Ենթատեսակ՝ <i>Bubo bubo interpositus</i> (Rothschild and Hartert, 1910), STRIGIFORMES, Strigidae	VU
52	Ներկարար, Կարգ՝ ԲՎԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Բվեր	<i>Coracias garrulus</i> (Linnaeus, 1758), CORACIIFORMES, Coraciidae	VU

	Ենթատեսակ՝ <i>Coracias garrulus garrulus</i> (Linnaeus, 1758) Կարգ՝ ՆԵՐԿԱՐԱՐԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Ներկարարներ	1758), <i>Coracias garrulus garrulus</i> (Linnaeus, 1758) , CORACIIFORMES, Coraciidae	
53	Կարմրակատար շամփրուկ, Կարգ՝ ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Շամփրուկներ	<i>Lanius senator</i> (Linnaeus, 1758) , PASSERIFORMES, Laniidae	VU
54	Սպիտակափող սոխակ, Կարգ՝ ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Կեռնեխներ	<i>Irania gutturalis</i> (Guerin, 1843) , PASSERIFORMES, Turdidae`	DD
55	Հնդկական եղեգնաթռչնակ, Կարգ՝ ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Շահրիկներ	<i>Acrocephalus agricola</i> (Jerdon, 1845) , PASSERIFORMES, Sylviidae	EN
56	Ժայռային դրախտապան, Կարգ՝ ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ Ընտանիք՝ Դրախտապաններ	<i>Emberiza buchanani</i> Blyth, 1844, PASSERIFORMES, Emberizidae	VU
ԿԱԹՆԱՍՈՒՆԵՐ - MAMMALS			
57	Դալի ավազամուկ, Կարգ՝ ԿՐԾՈՂՆԵՐ Ընտանիք՝ Ավազամկնանմաններ	<i>Meriones dahli</i> Shidlovski, 1962, RODENTIA, Gerbillidae	VU
58	Փոքր ճագարամուկ, Կարգ՝ ԿՐԾՈՂՆԵՐ Ընտանիք՝ Ճագարամկնանմաններ Ենթատեսակ՝ Արալիխի փոքր ճագարամուկ	<i>Allactaga elater</i> Lichtenstein, 1825, RODENTIA, Allactagidae, <i>Allactaga elater aralychensis</i> Satunin, 1901	EN

Անմիջապես ձկնաբուծարանի համար նախատեսված տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներ չկան:

2.8 Թափոնների կառավարում

Շահագործման փուլ

Ձկնարդյունաբերական կազմակերպություններում առաջացող թափոնների կառավարումն իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հուլիսի 27-ի N 262-Լ հրամանով հաստատված ուղեցույցի պահանջներով:

Ձկնարդյունաբերական կազմակերպություններում կարող են գոյանալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրամանով հաստատված ցանկում ներառված հետևյալ թափոնատեսակները.

- 1) կենցաղային աղբ /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 2 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մոտակա աղբավայր,
- 2) «Մանդամթերքի արտադրության հոսքաջրերի նստվածք» թափոնատեսակի ծածկագիրը՝ 11139030 02 00 4, մոտավոր քանակը տարեկան 100 կգ:

Ձկնաբուծության համար նախատեսված ջրավազաններում գոյացող թափոնը՝ կերի ավելցուկից և ձկան արտաթորանքների պինդ զանգվածից գոյացող նստվածքը, համապատասխան մշակումից հետո կարող է ծառայել որպես բարձրարժեք պարարտանյութ:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

3.1 ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ – ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՒՄ

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արտադրված ձկան ամեն տոննայի դիմաց շրջակա միջավայր է արտանետվում 132 կգ ազոտ և 25 կգ ֆոսֆոր:

Ձկնաբուծարանից չյուրացված կերը և ձկների չվերամշակված արտաթորանքներն ուղղակիորեն նետվում են շրջակա միջավայր և սննդարար տարրերի լրացուցիչ աղբյուր հանդիսանում: Թափոնների քանակը կախված է կերի բաղադրությունից, կերակրման ռեժիմից, կերի քանակից, կերի յուրացման չափից, ջրի մեջ կերի և արտաթորանքների կայունությունից, ջրի ջերմաստիճանից:

Մեղմացնող միջոցառումները ենթադրում են այնպիսի կերաբախշման համակարգեր, որոնք առավելագույնի կհասցնեն կերային գործակիցը և նվազագույնի՝ թափոնների գոյացումը: Ձկնակերի բաղադրության օպտիմիզացումը և ձկնակերի յուրացման աստիճանի բարձրացումը, ինչպես նաև կերի բախշման տեխնոլոգիայի բարելավումը:

Քանի որ գոյություն ունեցող ընդլայնման արդյունքում նախատեսվող լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է Հրազդան գետ այնտեղ խառնման արդյունքում տեղի է ունենում ջրում պարունակվող օրգանական միացությունների նոսրացում:

3.2 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.2.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Ընկերության գործունեության ընթացքում օդային ավազան արտանետումներ չեն առաջանում:

3.2.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրառի բոլոր կետերն ապահովել տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ սարքերով և տեղեկացնել շրջակա միջավայրի նախարարությանը դրանք կնքելու համար,
- հետազայում ներդնել ջրի փակ շրջանառու համակարգ:

3.2.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Ընկերության տարածքը արդեն իսկ կառուցապատված է՝ հողային նոր աշխատանքներ չի նախատեսվում:

3.2.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Գործունեության ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ուր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Ընկերությունում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Ձկնաբուծարանի շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Վերահսկել կերաբախշման համակարգը
2. Ներդնել այնպիսի կերաբաշխման համակարգ որը առավելագույնի կհասցնի կերային գործակիցը և նվազագույնի՝ թափոնների գոյացումը:
3. Ձկնակերի բաղադրության օպտիմիզացումը և ձկնակերի յուրացման աստիճանի բարձրացումը, ինչպես նաև կերի բախշման տեխնոլոգիայի բարելավումը:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 750000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շահագործման փուլ	
Ջրի անալիզների իրականացում ջրառի կետում	Եռամսյակ
Ջրի անալիզների իրականացում լճակներում	Եռամսյակ
Ջրի անալիզների իրականացում Հրազդան գետ թափման կետում	Եռամսյակ
Ջրի անալիզի իրականացում Հրազդան գետ թափման կետից հոսքն ի վար 100մ	Եռամսյակ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Անասնակերի պահում		<ul style="list-style-type: none"> • Անասնակերը պետք է պահվի համակցված կեր ձկների համար տեխնիկական պայմանով սահմանված պահանջներով:
Ջրային ռեսուրսներ		<ul style="list-style-type: none"> • ջրառի բոլոր կետերն ապահովել տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ սարքերով: • դրանք կապարակնքել, • հետազայում ներդնել ջրի փակ շրջանառու համակարգ: • Ջրի որակի վերահսկողություն

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Ընկերության տարածք	Արտաքին զննում	Գործունեության ողջ ընթացքում	Կապալառու, համայնքի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով	Արտադրահրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Ընկերություն
Կանաչապատում	Կանաչ տարածքների մոնիթորինգ	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Ընկերություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ